11. Հատ մ'ալ յիշենք եւրոպականներէն. — Ս. Ղազարու Հարք 1763 Ապրիլ 9–ին (միշտ 1773–էն առաջ) միաբանական վկայագիր մը կը ղրկեն առ Ս. Գահն երկու մենաստաններու համար, բնագրին մէջ կոչելով իրենք զիրենք « Congregazione dell'ordine di S. Antonio Abate de' Monaci armeni detti *Mechitaristi* ».

Արդ իբրև սխալ՝ հիմնովին արմատախիլ կ'ըլլայ Վիեննական Հարց « ՑՈՒՇԱՐՁԱՆ »ի տեսութիւնը (էջ 5), թէ 1773–ին իրենք առաջին անգամ գործածեր են Մխիթարեան տիտղոսը, ինչ որ բերանացի ևս ամենուրեք տարածեր են՝ թէ սոյն տիտղոսը Ս. Ղազարու վանականներէն առաջ իրենք գործածած են։ Այս թիւր վճիռներէն մոլորեր էր և Թէոդիկ, գրելով այսպէս. « 19 Մայիս 1773–ին [Վիեն- « նական Հարք] իրենց նոր կայանին մէջ վանատուն մը բանալու ծրագիրը կը հա- « սունցունեն և անդրանիկ Աբրահոր անուամբ կ'որոշեն կոչուիլ Մխիթարեան, մինչ « Ս. Ղազարեանք մինչև այն ատեն Անտոնեան կը յորջորջուէին..» (ՏԻՊ ՈՒ ՏԱՌ. Տպ. Պոլիս 1912. էջ 147)։ Նոյնպէս մոլորեր էր նաև Հալէպցի նորածին թերթ մը « ԿՐԹԱՍԻՐԱՑ » իր մանուկ քայլերուն մէջ, միևնոյնը վարդապետելով յանգէտս (1926, թիւ 3, էջ 38)։

Է

Յիսուսի Քրիստոսի ծառայ՝ Ստեփաննոս տրուպ Վարդապետ՝ Ընդհանրական Աբբայ միաբանից Վանաց Թորգոմազարմ հայկասերունդ միանձանց Մխիթարեանց՝ բնակելոց ի կալուածս կողմանց եւրոպական աշխարհի՝ ի կայանս ծովապարփակս՝ արձանացեալ առ մայրաքաղաքաւ վենետիկեան պայազատութեանց։ Քեզ պարկեշտակրօն, և զգօնացեալ բամբշիդ բարգաւաճելոյ բազմաստեղեան շառաւիղօք՝ ըստ օրհնութեանց լերանց մշտնջենաւորաց՝ սրբասէր կողակցիդ Ասկէրօղլու սէրգիս պալըյին, անուանելոյդ ըստ սեպհական անուան՝ նուրի. ողջոյն, և խնդութիւն, և բարեբաստութիւն և յամենայն ինքասուց ազատութիւն. կամակարութեամբք մտաց տենչամբ պատահիլ։ Զսոյն մաղթեմք և վասն ամենայն ընտանեաց, և տոհմի, և զարմի՝ առ ի ձէնջ յամոլակցացդ շառաւիղելոյ։ Հասցէ՛ ձեզ օրհնութիւն ի տիեզերանշոյլ սեռակնաձև քառաթեւէն՝ վերբերողէ զվերբերիչն բոլորեցունց։ Ցորդեսցին ի ձեզ սահանաբաց անձրևք արփիացնցուղք, որպէս անդ ուրեմն առ նախնեօք՝ վտակք երկնակայլակք Անվկանդ, և անհարթչելի գթասիրութիւն նախախնամութեան տիեզերացունծ հոգւոյն՝ զձեօք յաւէրժ փարեսցի, բարեխօսութեամբ ամենայցելու ձեռնտուութեան արգասաւէտ բեղմնաւորողին համասփիւռ ծաղկան՝ տիեզերաստած մօր՝ փառաւորեալ կուսի՝ երանածին ծնողի, միաբանութեան մերոյ պաշտպանի։ Որում բարեացասէր գունդք յերկնէ, և յերկրէ՝ ասասցեն ամէն։...

Այլ յաղագս գալստեան հայր Վրդանէսին այդր, որում յոյժ ցանկացեալքդ էք, ձեզ գիտութիւն լիցի, զի աւանիկ զիջեալ յաղաչանս ձեր, եթէ Տեառն կամք իցեն, առաքեմ զնա յայսմ գարնան առ ձեզ, զի տեսջիք և ուրախասջիք, տալ փառս Աստուծոյ. և նա ձեօք սփոփեսցի, որպէս բարեպաշտից են օրէնք։ Եւ արդ՝ կացէք դուք յաղօթս, զի խաղաղութեամբ և խնդութեամբ, և անխոչ յաջողութեամբք հանդերձեսցին ելք նորա աստի, և մուտք նորա այդր։

Քանզի մարդոյ իրս ինչ դնել ի մտի, ի Տեառնէ լինին յաջողուածք նորա։ Զի բազում ինչ դիտեն մարդիկ առնել կամ յառնելոյ զգուշանալ, բայց եթէ ոչ իցէ յաջողութիւն ի Տեառնէ, խափանի դիտաւորութիւն նոցա. զի զամենայն Տէր գործէ. և մեք եմք գործակիցք նորա։ Այսչափ ինչ յաղագս մխիթարութեան ձերոյ ասացեալ՝ շատ լիցի։ Եւ մեք աստանօր զընթացս բանից ի լռութիւն դադարեցուցեալ, առաքեմք բազմազեղ օրհնութեամբ ողջոյն Քրիստոսաւանդ՝ ամենայն որդւոց ձերոց, և դստերաց, և փեսայից, և մանաւանդ հեզահամբոյր առն պայազատի՝ մազլում Գէորգի՝ մտերիմ բա-